The purpose of the article is to identify the essence of the above method, the principles of teaching material by this method, indicating and justifying its advantages due to the relevant features of this method of teaching, as well as the features arising from the purpose of teaching.

The novelty of this study is the consideration of the phased application of the modern method of APA - training. The article considers the relationship between the artistic material and the historical period as a means of in-depth analysis of the learning material.

Keywords and phrases: Stimulation, perception of meaning, reasoning, ideological problems, artistic value, means of icon painting.

References:

1. Bakunts A., Countries, Yerevan, 1986.
2. Davtyan V., It is important to know the spirit, Yerevan, №3.
3. Panosyan S., On two moral types of the hero in modern Armenian prose, journal" Soviet Literature", 1988, g. 6.
4. Modern teaching methods, techniques, exercises, Lori Department of KAI, c Vanadzor, 2008.
5. Effective teaching techniques, S. Khachatryan, E. F. Ebert Foundation, Armenia, 2020.

Материал был представлен и отправлен на рецензию: 10.02.2021
Принято к публикации: 14.04.2021
Рецензент: канд пед. наук, ассистент Мери Оганнисян

The material was submitted and sent to review:10.02.2021
Was accepted for publication: 14.04.2021
Reviewer: PhD, Assistant Mary Hovhannisyan

378.147:811.19

ԿԱԽՑԱԼ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ (ՁԵՎԱԲԱՅԵՐԻ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հովհաննիսյան Մերի
Երևանի պետական համալսարան,
Հայաստան

Համառոտ ներածական: 20-րդ դարի 30-ական թվականներից դերբայները հայոց լեզվում դիտարկվեցին որպես բայի անդեմ ձևեր: Գ. Սևակը, խոսելով բայի ըմբռնման մասին, գրում է. «Մեր դպրոցական քերականությունն այդ կնճռոտ հարցը միայն վերջին տարիներին լուծեց. բայը իբրև խոսքի մաս առանձնացնելով թե՛ ստորոգյալից, թե՛ մանավանդ նախադասություններից, բայի մեջ դիտելով երկու դրսևորում, արտահայտություն կամ ձև, այն է՝ եղանակային կամ դիմավոր բայեր և անդեմ բայեր կամ դերբայներ» [14, 179]: Ա. Աբրահամյանը, խոսելով դերբայների նշանակության և դերի մասին, գրում է. «Հայերենի բայի խոնարհման համակարգի մասին, սակայն, ամբողջական պատկերացում չի կարելի կազմել առանց դերբայների: Դրա մասին են վկայում անալիտիկ կազմություն ունեցող դիմավոր ձևերը, ուր հիմնական դերը պատկանում է դերբայներին» [2, 8]:

Խոսքի մեջ բառերի ճիշտ ընտրության և դրանք խոսքային իրադրությանը և գրվածքի բովանդակությանն ու նպատակին համապատասխան գործածելու հմտություններ ձևավորելու համար հանրակրթական դպրոցի միջին դասարանների հայոց

լեզվի ծրագրով կարևորվում է ինչպես բայի քերականական կարգերի ուսուցումը, այնպես էլ բայի դիմավոր ու անդեմ ձևերի՝ դերբայների ճանաչումն ու տարբերակումը [9, 32]: Բուհական դասընթացում ևս կախյալ դերբայների ուսուցմանը առանցքային տեղ է հատկացվում, քանի որ վերջիններս մասնակցում են սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակաձևերի կազմությանը և բայի խոնարհման համակարգի ուսուցման բաղադրիչներից են: Ուսուցման ժամանակակից մեթոդների նպատակային համադրումը, մեթոդական համապատասխան քայլաշարի կիրառումը կարող են պայմանավորել դերբայների ուսուցման արդյունավետությունը՝ ընկալելի դարձնելով քերականական նյութը ոչ միայն իմաստաբանական, այլև ձևային, շարահյուսական առանձնահատկությունների տեսանկյունից:

Բանալի բառեր: Անդեմ բայ, կախյալ դերբայ (ձևաբայ), դերբայական համակարգ, դերբայների ուսուցում, դերբայների տարբերակում, խոնարհման համակարգի ուսուցում, բաղադրյալ ժամանակաձևերի ուսուցում, փոխգործուն մեթոդներ, տարբերակված ուսուցում, քերականության ուսուցում:

Հիմնախնդիրը: Ուսուցման ժամանակակից մեթոդները, ինչպես նաև հեռավար ուսուցման մարտահրավերը նոր պահանջներ են առաջադրում քերականության ուսուցման գործընթացում: Մի կողմից մանկավարժի կողմից ուսուցման գործընթացում հաշվի են առնվում քերականական նյութը սովորողներին դյուրընկալ դարձնելու, մատչելի ու համապարփակ ուսուցանելու, համապատասխան մեթոդ ընտրելու, մյուս կողմից՝ աշակերտների կողմից դերբայական ճշգրիտ ձևեր կազմելու, սխալ բայաձևեր չկիրառելու գործոնները: Հայ մանկավարժության պատմության մեջ առաջինը Ա. Բահրաթյանն է ընդգծել քերականության ուսուցման նպատակահարմար ձևերի ու մեթոդների անհրաժեշտությունը հատկապես աշակերտների խոսքի զարգացման տեսանկյունից [4]: Ականավոր մանկավարժի՝ քերականության ուսուցման վերաբերյալ տեսակետները այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը, սակայն դրանց հավելվում են ոչ միայն ժամանակի մեթոդական, այլև ճիշտ խոսելու, դերբայական ձևերը ճիշտ կազմելու և գործածելու պահանջները: Կախյալ դերբայների իմաստային, ձևային, կիրառական առանձնահատկությունների ուսուցումը, համապատասխան մեթոդների ընտրությունը կարող են ուղենշային լինել սովորողների՝ հայերենի խոնարհման համակարգի յուրահատկությունների ընկալման առումով:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Բայի ուսուցման տարբեր առանձնահատկություններին իրենց աշխատություններում անդրադարձել են Թ. Ջուհարյանը [13], Ս. Գյուլբուդաղյանը [6] և ուրիշներ: Հիմնական դպրոցում և բուհում բայական համակարգի ուսուցման արդիական քննություն են Ս. Թորգոմյանի [8], Ս. Մինասյանի [12] աշխատությունները, Ա. Էդոյանի՝ բայի անդեմ և դիմավոր ձևերի ուսուցմանը նվիրված հոդվածը [7]: Նշված աշխատություններում հեղինակներն առավելապես ընդհանրական անդրադարձ են կատարել հայերենում բայի դիմավոր ու անդեմ ձևերի տարբերակային ուսուցմանը, մինչդեռ կախյալ դերբայների ոչ միայն գործածական-կիրառական, այլև իմաստային, ձևային առանձնահատկությունների ուսուցումը առաջ է բերում մեթոդական համապատասխան քայլաշարի առանձնացում, որը հնարավորություն կտա մանկավարժին թե՛ դպրոցում, թե՛ բուհում առավել դյուրընկալելի դարձնելու աշակերտների կողմից բայի անդեմ ձևերի համապարփակ ընկալման, անկախ ու կախյալ դերբայների, ճիշտ ու սխալ կազմված բայաձևերի տարբերակման գործընթացը:

Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է մեթոդաբանորեն հիմնավորել հայերենի կախյալ դերբայների ուսուցման առանձնահատկությունները դպրոցական և բուհական դասընթացներում՝ մեթոդական քայլաշարի միջոցով ընդգծելով թեմայի ուսուցման ժամանակ երևան եկող խնդիրները, դժվարությունները և առաջարկելով դրանց լուծման ուղիներ:

Հետազոտության նորույթը: Վեր են հանվել կախյալ դերբայների ուսուցման առանձնահատկությունները՝ մեթոդական նպատակային ու հաջորդական քայլերի իրացմամբ՝ քերականության ուսուցման վերլուծության, համադրական, համեմատության, հակադրության մեթոդները զուգադրելով ուսուցման ժամանակակից, մասնավորապես փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդների կիրառմամբ:

Հիմնական նյութի շարադրանքը: Արտահայտելով գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար՝ դերբայները հավասարարժեք բայական միավորներ են և սերտորեն կապված, փոխկապակցված են միմյանց հետ: Դերբայները լինում են անկախ և կախյալ: Անկախ դերբայներն ունեն ինքնուրույն շարահյուսական կիրառություն և անկախ բառային միավորներ են: Ժամանակակից հայերենի անկախ դերբայներն են՝ անորոշ, ենթակայական, հարակատար, համակատար: Կախյալ դերբայները, որոնք կոչվում են նաև ձևաբայեր, ինքնուրույն շարահյուսական կիրառություն չունեն և նախադասության մեջ գործածվում են միայն օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերի հետ: Կախյալ դերբայները, գործածվելով օժանդակ բայերի հետ, նախադասության մեջ կարող են դառնալ միայն պարզ ստորոգյալ: Ժամանակակից հայերենի կախյալ դերբայներն են՝ անկատար, ապակատար, վաղակատար ժխտման կամ ժխտական [3, 225-226]:

Հայոց լեզվի 7-րդ դասարանի դպրոցական դասագրքում կախյալ դերբայների ուսուցումն իրականացվում է՝ ըստ նշված դերբայների իմաստային, ձևային և շարահյուսական առանձնահատկությունների: Օրինակ՝ «Անկատար դերբայը ցույց է տալիս գործողությունն ընթացքի մեջ կամ կատարման վիճակում: Ունի *-ում* վերջավորություն, որն ավելանում է անորոշ դերբայի հիմքին *ալ* կամ *ել* վերջավորության փոխարեն: Անկատար դերբայը օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձևեր և դառնում ստորոգյալ»: Այնուհետև բերվում են մի քանի առաջադրանքներ, ըստ որոնց՝ պետք է ընդգծվեն համապատասխան դերբայները, կամ անորոշ դերբայից կազմվի համապատասխան կախյալ դերբայը՝ գործածելով այն նախադասության մեջ [5, 98]:

Բուհական դասընթացում ձևաբայերի առանձնահատկությունների ուսուցումն իրականացվում է ինտերակտիվ դասախոսությունների միջոցով, որոնց նպատակն է գաղափար տալ կախյալ դերբայների արտահայտած իմաստի, կազմության և շարահյուսական առանձնահատկությունների, ինչպես նաև կախյալ դերբայներով կազմվող ժամանակաձևերի վերաբերյալ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև նշված ժամանակաձևերի ոճական կիրառություններին ու կախյալ դերբայների խոսքիմասային փոխանցումների ուսուցմանը, որը բացակայում է դպրոցական դասընթացում: Այսպիսով՝ դասընթացի շրջանակում ուսուցանվում և քննարկվում են հետևյալ հարցերը.

- կախյալ դերբայներ,
- կախյալ դերբայների կազմության առանձնահատկությունները, արտահայտած իմաստները և շարահյուսական կիրառությունները,
- բայի դիմավոր ձևերը,
- բայի քերականական կարգերը,
- բայի ժամանակաձևերը,

- ներկայի հետ հարաբերակցվող ժամանակաձևը՝ ներկա անկատար,
- անցյալի հետ հարաբերակցվող ժամանակաձևերը՝ անցյալ անկատար, ներկա վաղակատար, անցյալ վաղակատար, անցյալ ապակատար, անցյալ կատարյալ,
- ապառնիի հետ հարաբերակցվող ժամանակաձևը՝ ներկա ապակատար [3, 258-294]:

Դերբայների ուսուցման առաջին քայլաշարում եռաթև աղյուսակ մեթոդով դիտարկում ենք **անկատար, վաղակատար, ապակատար դերբայների** իմաստային առանձնահատկությունները՝ ընդգծելով նշված դերբայների անմիջական ու ուղղաձիգ կերպային հակադրությունը՝ կատարվող, կատարված, կատարելի կերպային գաղափարներով:

Անկատար դերբայ (-ում)	**Վաղակատար դերբայ (-ել, -ացել)**	**Ապակատար դերբայ (-ելու, -ալու)**
Կատարվող, ընթացքի մեջ գտնվող գործողություն	Կատարված, ավարտված գործողություն	Կատարելի գործողություն
գրել, կարդալ, թռչել, հագնել, մոտենալ, վախենալ, հիշեցնել, ցատկոտել, կառուցվել	գրել, կարդացել, թռել, հագել, մոտեցել, վախեցել, հիշեցրել, ցատկոտել, կառուցվել	գրելու, կարդալու, թռչելու, հագնելու, մոտենալու, վախենալու, հիշեցնելու, ցատկոտելու, կառուցվելու
Ես **սիրում** եմ մթնշաղը նրբակերտ, Երբ ամեն ինչ **երազում** է հոգու հետ... (Վ. Տ.)	**Մարել** ես արդեն, **մեռել** ես հավետ, Հեռավոր կյանքի երազների բոց... (Վ. Տ.)	-Կավալլարոն քեզ **դիմավորելո՞ւ** է Միլանում (Շ.):
Երբ Հայաստան են **ասում**, **Ճաքում** է նուռը կրքից, **Քրտնում** է վազը դրկից, Եվ աստղերը երկնքից Ականջիդ բան **ասում**: (Հ. Ս.)	Քամին քարայրն է **մտել**, **Փշաքաղվել** է, Քարափի հոնքը **ծռվել**, Աչքը **շաղվել** են է... (Հ. Ս.)	Ինքն էլ ամենաուշը մի ամսից **ուղևորվելու** է Իտալիա (Շ.):

Ծագումնաբանորեն անկատար դերբայը կապվում է ներգոյական հոլովի հետ, բայց ունի ոչ թե հոլովական, այլ դերբայական իմաստ: Նշված դերբայի էությունը գործողության կամ եղելության մեջ լինելու գաղափարն է: Գեղարվեստական գրականությունից մեջբերված օրինակներով բացատրում ենք դերբայի արտահայտած իմաստը: Բերված օրինակներում կոնկրետ խոսքային պայմաններում դիմավոր բայերը (անկատար դերբայ+օժանդակ բայ) պարզ ու որոշակի ընդգծում են ենթակաների (ես, ամեն ինչ, ալիքը) վիճակը. յուրաքանչյուր նախադասության ենթական կատարում է գործողություններ, որոնք ավարտված չեն, այլ ընթացքի մեջ են:

Անկատար դերբայի կազմությունը դյուրին է, անորոշ դերբայի հիմքին ավելացնում ենք -ում մասնիկը՝ բայական -ել, -ալ մասնիկների փոխարեն:

Սովորողները ընդգծում են անկատար դերբայ + օժանդակ բայ կառույցները, վերլուծում են նախադասությունները, որոշում գլխավոր անդամները և եզրակացնում՝ անկատար դերբայը օժանդակ բայի հետ դիմավոր բայաձևեր է կազմում, որոնք կատարում են ստորոգյալի պաշտոն: Անորոշ դերբայի և օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերով բաղադրվում են սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը:

Մեթոդական նույն հնարով ուսուցանում ենք վաղակատարի դերբայական իմաստը: Նշված դերբայի ձևային առանձնահատկությունների ուսուցումը հատկապես բուհական դասընթացում պահանջում է նաև փոխգործուն մեթոդի կիրառում, որը հնարա-

վորության կտա հակադրության կամ համեմատության հիմքով ցուցադրելու, բացատրելու վաղակատարի կազմության առանձնահատկությունները պարզ և ածանցավոր բայերի համար: Դերբայների ուսուցման երկրորդ քայլաշարում կիրառում ենք Վենի գծապատկերը.



Վենի գծապատկերի հատման կետում առանձնացնում ենք անորոշ և վաղակատար դերբայների ձևային ընդհանրություններն ու տարբերությունները.

- չնայած վաղակատար դերբայը ձևային նույնություն ունի անորոշ դերբայի հետ, սակայն նրա հիմնական դերը ձևաբանական է. այն կազմում է դիմավոր ձևեր և նրանցից դուրս շարահյուսական կիրառություն չունի,
- Ե խոնարհման պարզ, բազմապատկական, կրավորական բայերի վաղակատարը կազմվում է անկատարի հիմքից, և այս դեպքում անորոշ և վաղակատար դերբայները ձևով նույնանում են,
- Ա խոնարհման պարզ և սոսկածանցավոր, Ե խոնարհման սոսկածանցավոր և պատճառական բայերի վաղակատար դերբայը կազմվում է կատարյալի հիմքից, և այս դեպքում անորոշ և վաղակատար դերբայները ձևաբանորեն տարբերակված են,
- անորոշ դերբայն ունի անկախ կիրառություն, վաղակատարը բաղադրում է սահմանականի ներկա վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակաձևերը:

Խոնարհման համակարգում վաղակատար դերբայը գրավում է յուրահատուկ տեղ: Այս դերբայի կազմությունը, ըստ խոնարհման, կարող ենք ներկայացնել նաև գծապատկերով.



Ուսանողներին վաղակատարի կազմության առանձնահատկությունները նպատակահարմար է բացատրել բայահիմքերի տարբերակմամբ, իսկ աշակերտներին նշվածն առավել ընկալելի կլինի, եթե բացատրությունները տանք պարզ և ածանցավոր բայերի կազմության դիտարկմամբ: Այսպես՝ վաղակատարում -ն-, -չ- սոսկածանցները դուրս են ընկնում, ինչպես՝ գտնել-գտել, փախչել-փախել, -ան-, -են- ածանցները դառնում են -աց-, -եց-, ինչպես՝ մեծանալ-մեծացնել, վախենալ-վախեցնել, պատճառական -ցն- ածանցը՝ -ցր-, օրինակ՝ խոսեցնել –խոսեցրել, մեծացնել –մեծացրել և այլն:

Շատ կարևոր է սովորողների ուշադրությունը բևեռել այն հանգամանքի վրա, որ ներկա վաղակատար ժամանակաձևը թեև կազմվում է օժանդակ բայի ներկայի ձևերով, սակայն արտահայտում է անցյալի իմաստ, օրինակ՝ *գրել եմ, ասել է, մտածել ենք* և այլն: Ներկայացվում են օրինակներ, ընդգծվում են վաղակատար դերբայները.

Գարնան լուսե ամպի նման՝
Այս խավար կյանքում
Դու **նետել ես** մի թովչական
Ժրպիտ իմ հոգուն:

Մոլոր սրտիս տառապանքի
Անլույս աշխարհում
Դու **վառել ես** մի այլ կյանքի
Արևոտ հեռուն:

Դրոշմել ես բոցե կընիք
Մեռած իմ հոգում.
Դո՛ւ իմ հավատ, իմ հայրենի՛ք,
Դո՛ւ իմ փրկություն... (Վ. Տ.)

Դերբայների ուսուցման հաջորդ քայլաշարում սովորողների ուշադրությունը բևեռում ենք անորոշ դերբայի սեռական հոլովաձևի և ապակատար դերբայի տարբերակման վրա:

Ապակատար դերբայն արտահայտում է ապառնիում կատարվելիք գործողություն և կազմվում է -(ել, ալ)ու մասնիկով. «Այս ձևի դերբայական *ու* մասնիկը ծագումով անորոշ դերբայի հնագույն *-ռ* հոլովիչն է, որը պայմանականորեն ձևափոխվել է (ոյ խմբով) ոչ միայն անորոշ դերբայի հոլովաձևերում, այլև դրանցից առաջացած դերբայական այս ձևում» [1, 376]: Նույն կարծիքին է Ա. Ղարիբյանը. «Ճիշտ կլիներ ասել, որ ապառնի դերբայը անորոշ դերբայի սեռականի կամ անորոշ տրականի հետ օժանդակ բայի կողքին ստացել է բայիմաստի ֆունկցիա, որի պատճառով էլ թվում է նրանցից հեռացան» [11, էջ 269]:

Անորոշ դերբայի սեռական հոլովի ապակատար դերբայի հետ չշփոթելու համար շեշտը դնում ենք այդ դերբայների գործածության վրա. անորոշի սեռականը դառնում է գոյականական անդամի որոշիչ լրացում, նպատակի պարագա, իսկ ապակատար դերբայը միշտ գործածվում է օժանդակ բայի հետ և դառնում է ստորոգյալ: Նշված իրողությունը կարելի է ցուցադրել նույն բայի հոլովական (անորոշի սեռական) ու բուն դերբայական (ապակատար) տարբերակների հակադրությամբ: Դիտարկենք օրինակ. «Այս ջուրը խմելու է» նախադասության մեջ *խմելու է* ձևը ցույց է տալիս հատկանշային իմաստ, այսինքն՝ «խմելու ջուր է», իսկ «Երեխան այս ջուրը խմելու է» նախադա-

սության մեջ արտահայտում է կերպային, ժամանակային իմաստ: Կարող ենք կիրառել Т-աձև աղյուսակի մեթոդը.

ԱՆՈՐՈՇԻ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԱՁԵՎ	ԱՊԱԿԱՏԱՐ
ՀՊԱՐՏԱՆԱԼՈՒ ԱՌԻԹ	Նա **հպարտանալու** է որդու արարքով:
ՆՍՏԵԼՈՒ ՏԵՂ	Արմենը **նստելու** է այդտեղ:

Առաջին շարքի օրինակներում գործ ունենք ինքնուրույն կիրառություն ունեցող անորոշ, իսկ երկրորդում՝ ապակատար դերբայի հետ, որը օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձևեր և մասնակցում խոնարհման հարացույցին: Այս դերբայի ուսուցման ժամանակ կարելի է կիրառել նաև համեմատության աղյուսակ:

Այսպիսով՝ ապակատար դերբայը ցույց է տալիս սպասվող, ապագայում կատարման ենթակա գործողություն, որն օժանդակ բայի հետ նախադասության մեջ կատարում է ստորոգյալի պաշտոն՝ կազմելով ներկա անկատար և անցյալ անկատար ժամանակաձևերը:

Ձևաբայերի շարքում ժխտական դերբայն առանձնահատուկ նշանակություն ունի: Նախ սովորողներին բացատրում ենք, որ ըղձական ապառնի ժամանակաձևի եզակի երրորդ դեմքը ձևային նույնություն ունի ժխտական դերբայի հետ: Դերբայը Ա. Ղարիբյանն անվանել է ըղձական, ավելի ուշ՝ ժխտական, քանի որ գործածվում է միայն օժանդակ բայի ժխտական ձևերի հետ [11, էջ 289]: Նշված դերբայի մեջ որոշակիորեն արտահայտվում է կատարելի վիճակի գաղափար, ինչպես ապակատար դերբայի դեպքում: Ուրեմն կարելի է սահմանել այսպես՝ ժխտման դերբայը ցույց է տալիս կատարելի գործողություն, որը ժխտվում է օժանդակ բայի ժխտական ձևերով:

Ժխտման դերբայի ուսուցման ժամանակ կարևորում ենք դրա ձևավորման յուրահատկությունը: Ի տարբերություն մյուս դերբայների՝ այս դերբայը կազմության հատուկ մասնիկ չունի. մասնիկի դեր կատարում են ե և ա խոնարհիչները: Դերբայն առանց շեղումների կազմվում է անորոշ դերբայի հիմքից, ընդ որում՝ Ա խոնարհման բայերի ա խոնարհիչը անփոփոխ մնում է, իսկ Ե խոնարհման բայերի ե խոնարհիչը փոխվում է ի վերջավորությամբ (ընկնում է լծորդը), ինչպես՝ *գրի, խաղա, ընդունի, հասկանա* և այլն:

Գեղարվեստական գրականությունից դուրս են բերվում տարբեր կազմության բայաձևեր, կազմվում է եռաթև համեմատության աղյուսակ՝ բայաձևերը գրելով աղյուսակի համապատասխան սյունակներում, ինչպես՝

Բայաձև	Անորոշ դերբայ	Ժխտական դերբայ
սիրում էր	սիրել	(չեմ, չես, չի...) սիրի
ապրում է	ապրել	(չեմ, չես, չի...) ապրի
հասկացավ	հասկանալ	(չեմ, չես, չի...) հասկանա
թռավ	թռչել	(չեմ, չես, չի...) թռչի
խոսեցրել	խոսեցնել	(չեմ, չես, չի...) խոսեցնի
համակվելու	համակվել	(չեմ, չես, չի...) համակվի

Ժխտման դերբայի միակ գործառույթը ենթադրական եղանակի ժխտական բայաձևերի կազմությանը մասնակցելն է, նախադասության մեջ ստորոգյալի պաշտոն կատարելը, ինչպես՝

Չի հասկանա ձեր հոգին՝ և ծույլ, և օտար,

Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քար... (Վ. Տ.)

Եզրակացություն: Ձևաբայերի տարբերակված ուսուցումը փոխգործուն տարբեր մեթոդների կիրառությամբ բացահայտում է խոսքի մեջ դրանց կատարած դերը, ձևաբանական արժեքն ու շարահյուսական կիրառությունները: Դերբայական համակարգում, ի տարբերություն անկախ դերբայների, որոնց հիմնական դերը շարահյուսական է, ձևաբայերի ուսուցումը հաստատում է նշված դերբայների ձևաբանական արժեքը. օժանդակ բային միանալով՝ ձևաբայերը դիմավոր ձևեր են կազմում՝ ամբողջացնելով խոնարհման համակարգը: Նախադասության մեջ վերջիններս հանդես են գալիս ստորոգյալի գործառույթով: Կախյալ դերբայների ուսուցման նպատակը ոչ միայն այդ ձևերի զուտ ճանաչումն ու տարբերակումն է, այլև խոսքի մեջ այդ բառերի կրած փոփոխությունների և դրանց միջոցով տարբեր հարաբերություններ արտահայտելու գիտակցումը, բայական թեքված ձևերը խոսքում ճիշտ գործածելու, դերբայական սխալ ձևերը զանազանելու կարողության ձևավորումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան, 1962:
2. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:
3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն, Երևան, 2002:
4. Բահաթրյան Ա., Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դպրոցների մեջ // «Մանկավարժական թերթ», թիվ 1-6, Թիֆլիս,1878:
5. Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու, 7-րդ դասարան, 2011:
6. Գյուլբուդաղյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի մեթոդիկայի, Երևան, 1970:
7. Եդոյան Անուշ, Բայի դիմավոր և անդեմ ձևերի ուսուցումը, https://www.vsu.am/grqer/-2016/aprak/edoyananush.pdf (դիտման ամսաթիվ՝ 12.02.2021):
8. Թորգոմյան Ս., Բայի ուսուցումը հիմնական դպրոցում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2012:
9. Հանրակարթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Հայոց լեզու, գրականություն, Երևան, 2006:
10. Ձևաբանության ուսուցումը 5-6-րդ դասարաններում: (Մեթոդ. օժ. ձեռնարկ հայոց լեզվի ուսուցիչների համար), Երևան, 1985,
11. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1964:
12. Մինասյան Ս., Բայի ուսուցումը բուհում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Ստեփանակերտ, 2008:
13. Ջուհարյան Թ., Բայի ուսուցման հիմնական հարցերը, Երևան, 1956:
14. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, գիրք Ա, Երևան, 1939:

ОСОБЕННОСТИ ОБУЧЕНИЯ ЗАВИСИМОМУ ПРИЧАСТИЮ (ДЕРБАЮ) В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Оганнисян Мери

ЕГУ, Армениа

Аннотация

В программе дисциплины «Армянский язык» средних классов общеобразовательной школы с целью формирования умения правильного подбора слов в речи и их использования в соответствии с речевой ситуацией и целью и содержанием письма выделяется изучение грамматических категорий

глагола, а также ознакомление и умение различать личные и безличные формы глагола – причастия (дербаи).

Целевое сочетание современных методов обучения, применение соответствующих методических шагов могут привести к повышению эффективности обучения безличным глаголам, сделать понятным грамматический материал не только с точки зрения смысловых, но и морфологических и синтаксических особенностей.

Дифференцированное обучение зависимому причастию с использованием разных методов обучения раскрывает их роль в речи, морфологическое значение и синтаксическое применение. Целью обучения зависимым причастиям является не только распознавание и дифференциация этих форм, но и изучение изменений данных слов и выражение с их помощью различных отношений, формирование умения правильно использовать в речи спрягаемые формы глагола, различать неправильные причастные формы.

Ключевые слова: безличный глагол, зависимый глагол, система причастий, обучение причастиям, различение причастий, обучение системе сопоставления, обучение сложному времени, интерактивные методы, дифференцированное обучение, обучение грамматике.

Список использованной литературы

1. Абрамян А., Глагол в современном армянском языке, книга 1, Ереван, 1962.
2. Абрамян А., Армянские глаголы и их морфологическое значение, Ереван, 1953.
3. Асатрян М., Современный армянский язык. Психология, Ереван, 2002.
4. Бахатрян А., Обучение родному языку в начальной школе // «Педагогическая газета», № 1-6, Тбилиси (Грузия), 1878.
5. Барсегян А., Мейтиханян П., армянский язык, 7 класс, 2011.
6. Гюлбудагян С. Очерки методологии армянского языка, Ереван, 1970.
7. Ануш Эдоян, Обучение безличним глаголам, https://www.vsu.am/grqer/2016/aprak/edoyananush.pdf (дата просмотра: 12.02.2021).
8. Торгомян С., Обучающий глагол в основной школе, Учебно-методическое пособие, Ереван, 2012.
9. Типовая предметная программа средней школы, армянский язык, литература, Ереван, 2006.
10. Обучение грамматике в 5-6 классах. (Методическое пособие для учителей армянского языка), Ереван, 1985,
11. Гарибян А., Методика преподавания армянского языка, Ереван, 1964.
12. Минасян С. Глагол обучения в вузе, Учебно-методическое пособие, Степанакерт, 2008.
13. Джухарян Т., Основные вопросы обучения глаголу, Ереван, 1956.
14. Севак Г., Теория современного армянского языка. Книга А, Ереван, 1939.

THE FEATURES OF TEACHING DEPENDENT DERBAYS IN THE ARMENIAN LANGUAGE

Hovhannisyan Mary
YSU, Armenia

Summary

For the correct choice of words in speech, the formation of skills of their use in accordance with the speech situation, the goals in the secondary school program of the Armenian language of the middle classes are both the study of grammatical orders of the verb, and the recognition and differentiation of personal and impersonal forms of the verb (derbay).

The targeted comparison of modern teaching methods, the use of appropriate methodological steps can determine the effectiveness of teaching impersonal verbs, making grammatical material understandable not only in terms of semantic, but also formal, syntactic features. The differentiated study of verbs using various interactive methods reveals their role in speech, morphological meaning and syntactic application. The purpose of teaching dependent derbay is not only to recognize and differentiate these forms, but also to understand the changes made by these words in the speech, and to express different relations through them, to develop the ability to correctly use these inclined verb forms in the word, to distinguish erroneous derbay forms.

Keywords: impersonal verb, dependent verb, derivation system, derivation training, derivation differentiation, conjugation system training, compound tense training, interactive methods, differentiated training, grammar training.

References:

1. Abrahamyan A., The verb in modern Armenian, book 1, Yerevan, 1962.
2. Abrahamyan A., Armenian verbs և their morphological meaning, Yerevan, 1953.
3. Asatryan M., Modern Armenian language. Psychology, Yerevan, 2002.
4. Bahatryan A., Teaching the mother tongue in primary schools // "Pedagogical newspaper", No. 1-6, Tbilissi (Georgia), 1878.
5. Barseghyan H., Meytikhanyan P., Armenian language, 7th grade, 2011.
6. Gyulbudaghyan S., Essays on the methodology of the Armenian language, Yerevan, 1970.
7. Anush Edoyan, The training of faceless verbs, https://www.vsu.am/grqer/2016/aprak/edoya-nanush.pdf (view date: 12.02.2021).
8. Torgomyan S., Teaching Verb in Basic School, Educational-Methodological Manual, Yerevan, 2012.
9. Subject standard curriculum of the secondary school, Armenian language, literature, Yerevan, 2006.
10. Teaching psychology in grades 5-6. (Methodological Auxiliary Manual for Armenian Language Teachers), Yerevan, 1985,
11. Gharibyan A., Methodology of teaching the Armenian language, Yerevan, 1964.
12. Minasyan S., Teaching verb at the university, Educational-methodical manual, Stepanakert, 2008.
13. Juharyan T., The main issues of teaching the verb, Yerevan, 1956.
14. Sevak G., Theory of the Modern Armenian Language, Book A, Yerevan, 1939.

Материал был представлен и отправлен на рецензию: 25.02.2021
Принято к публикации: 12.04.2021
Рецензент: канд.фил. наук, доцент Арменуи Арзуманян

The material was submitted and sent to review:25.02.2021
Was accepted for publication: 12.04.2021
Reviewer: Assoc. Prof., PhD. Armenuhih Arzumanyan